ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01/19

ք.Երևան 08.01.2019թ.

Վարչապետի աշխատակազմը, (այսուհետ՝ Աշխատակազմ), ի դեմս Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վահան Պապիկյանի, որը գործում է Աշխատակազմի ղեկավարի հրամանի հիման վրա, մի կողմից, և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Ստացող), ի դեմս կազմակերպության տնօրեն Արեգ Սավգուլյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1635-Ա որոշման և հաստատված կանոնադրության հիման վրա մյուս կողմից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի, 01 խմբի, 01 դասի, «Ծառայությունների ծրագրերի համակարգում» 1136 ծրագրի 11001 միջոցառմամբ Աշխատակազմի համար նախատեսված գումարից 386,345,800 հազար դրամ (երեք հարյուր ութսունվեց միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր) գումարով սուբսիդիան (այսուհետ՝ Սուբսիդիա) և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի, 01 խմբի, 01 դասի, «Ծառայությունների ծրագրերի համակարգում» 1136 ծրագրի 11001 միջոցառմամբ նախատեսված 386,345,800 հազար դրամ (երեք հարյուր ութսունվեց միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր) Սուբսիդիայի գումարը, որը տրամադրվող Սուբսիդիայի առավելագույն չափն է, Աշխատակազմը Ստացողին է տրամադրում ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով: Ստացողը պարտավորվում է տրամադրված ֆինանսական միջոցներն օգտագործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների սպասարկման (ներառյալ կեցության ապահովման) և շահագործման,
- Կոնդի առանձնատների տնտեսության տարածքի և օժանդակ կառույցների սպասարկման և շահագործման, ինչպես նաև «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի գործնեության կազմակերպման, նրա պահպանման, խնամքի, բարեկարգման և բարելավման աշխատանքների և կանոնադրական այլ նպատակների իրականացման համար:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կողմերի իրավունքները

2.1.1. **Աշխատակազմը իրավունք ունի.**

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Սուբսիդիա ստացողի կողմից մատուցված ծառայությունների ընթացքը՝ առանց միջամտելու նրա բնականոն գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների բնութագրերի վերաբերյալ:

2.1.3. Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.1.4. Վերահսկել Սուբսիդիա ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.1.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.2. Ստացողն իրավունք ունի.

2.2.1. Տեղեկացնել Աշխատակազմին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում տեղ գտած թերությունների վերաբերյալ:

2.2.2 Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Աշխատակազմին:

2.2.3. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներից:

2.3. Կողմերի պարտականությունները

2.3.1 **Աշխատակազմը պարտավոր է.**

. 2.3.2. Սուբսիդիան տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի «Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

2.3.3. Պարբերաբար վերլուծել կատարողի կողմից մատուցվող ծառայությունները, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.3.3. Մատուցված ծառայության դիմաց Սուբսիդիա ստացողին վճարել անկանխիկ, յուրաքանչյուր ամիս, վճարման ժամանակացույցին համապատասխան:

23.01.2019

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կողմերի իրավունքները

2.1.1. **Աշխատակազմը իրավունք ունի.**

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Սուբսիդիա ստացողի կողմից մատուցված ծառայությունների ընթացքը՝ առանց միջամտելու նրա բնականոն գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների բնութագրերի վերաբերյալ:

2.1.3. Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.1.4. Վերահսկել Սուբսիդիա ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.1.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.2. Ստացողն իրավունք ունի.

2.2.1. Տեղեկացնել Աշխատակազմին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում տեղ գտած թերությունների վերաբերյալ:

2.2.2 Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Աշխատակազմին:

2.2.3. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներից:

2.3. Կողմերի պարտականությունները

2.3.1 **Աշխատակազմը պարտավոր է.**

2.3.2. Սուբսիդիան տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի «Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

2.3.3. Պարբերաբար վերլուծել կատարողի կողմից մատուցվող ծառայությունները, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.3.3. Մատուցված ծառայության դիմաց Սուբսիդիա ստացողին վճարել անկանխիկ, յուրաքանչյուր ամիս, վճարման ժամանակացույցին համապատասխան:

2.4. Ստացողը պարտավոր է.

2.4.1 Իրականացնել իրեն ամրացված **18250.1 քմ** ընդհանուր մակերեսով շենքերի, շինությունների, և **25.31319** հեկտար հողատարածքի ընթացիկ պահպանման, սպասարկման և շահագործման աշխատանքները:

2.4.2.Ամսական կտրվածքով Աշխատակազմին ներկայացնել իր կատարած ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն, մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 10-ը:

2.4.3.Աշխատակազմի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.4.4 Ներկայացնել Աշխատակազմ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի 2019թ. նախահաշիվն ու հաստիքային ցուցակը (կցվում է):

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սուբսիդիա ստացողը սույն պայմանագրի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում Սուբսիդիա տրամադրողին է հանձնում իր կողմից ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 8.1 կետի համաձայն ստորագրված հանձման-ընդունման ակտի օրինակ:

4.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ/ՖՈՐՍ-ՄԱԺՈՒՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չեին կարող կանխատեսել կամ կանխերգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները,գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելին, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

6.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրը կնքվում է 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.2 Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

7.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

7.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, ինչպես նաև տարածվում է 08.01.2019 թվականից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ՍՏԱՑՈՂ
«ՀՀ վարչապետի աշխատակազմ» Հասցե՝ 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարության տուն, 1	«Կոնդի առանձնատների տնտեսություն» Պետական ոչ առևտրային կազմակերպություն Հասցե՝ ք.Երևան, Ձորափի 74
	գգ Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական թիվ 1 շենք	Հ/Հ 1510032301260100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011022085 ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 02544888

Գործերի կառավարչի պաշտոնակատար՝
ՎԱՀԱՆ ՊՈՊՈՒՅԱՆ

Կ.Տ.

Տնօրեն՝
ԱՐԵԳ ՍԱՎԳՈՒԼՅԱՆ

Կ.Տ.